ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 2-8911

« 25 » հոկտեմբերի 2021թ.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՉՅԱՆ ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ՂԱԶԱՉՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• Հավելված N 1.2-ին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը.

• «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում՝ հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին նշված է «28.09.2021թ.», այն դեպքում, երբ հայտարարագիրը ներկայացնող անձի էլեկտրոնային թվային ստորագրությունը դրված է 18.10.2021թ.-ին.

• «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» դաշտում նշված է կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, սակայն «ա» կետում, ինչպես նաև «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտում որևէ նշում կատարված չէ.

• «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը» դաշտում կատարված չէ նշում իրական շահառուի կողմից կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ.

2. ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՉՅԱՆ ԱՁ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) բացակայում է մասնակցի բանկային հաշվեհամարը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 26-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788